ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ գյուղական համայնք, գ. Ջրառատ փ 1-ին, շենք 2, Հեռ. 098 919 523 Էլ. փոստ Jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015թ.N 26

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ 9-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ *Ջրառատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 15-ի 9-րդ հերթական նիստի օրակարգը

1. Ջրառատ գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

2. Ջրառատ գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

3. Ջրառատ գյուղական համայնքի 2016թվականի բյուջեն հաստատելու մասին

4. Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2016թ. հերթական նիստերի ժամանակացույց սահմանելու մասին

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

ՄԻՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՂԻՇԵ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ գյուղական համայնք, գ. Ջրառատ փ 1-ին, շենք 2, Հեռ. 098 919 526 Էլ. փոստ Jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015թ.N 27-Ն

ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ *Ջրառատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

1.Սահմանել Ջրառատ գյուղական համայնքի վարչական տարածքում ֆիզիկական և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունների գործունեություն ծավալելու համար ընթացիկ տարվա տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 17-ի << Ջրառատ գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 21-Ն որոշումը:

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ՄԻՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՂԻՇԵ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
15-Ի ԹԻՎ 27-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Տուրքերի տեսակները	Օրենքով սահմանված դրույքաչափը /հազ. դրամ/	Առաջարկվող դրույքաչափը /հազ. դրամ/
1	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների /այդ թվում՝ ոչ հիմնական/ շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար . Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.		
	հիմնական օբյեկտների համար		
	1) մինչև 300 քմ ընդհ. մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	0 – 15.0	7.5
	2) Սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝		
	ա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-30.0	15.0
	բ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-50.0	25.0
	գ. 1001-ից 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-50.0	25.0
	դ. 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-100.0	50.0
	Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար		
	3) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-3.0	1.5
	4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0 - 5.0	2.5

2	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
	1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն	0-3.0	1.5
	2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:		
	3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի առաջին կետով սահմանված նորմերը:		
3	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է	0 - 5.0	2.5
4	Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝		
	1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	0 - 17.5	2.0
	2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	1.5-17.5	2.0
5	Համայնքի տարածքում՝		
	1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար մեկ քմ-ի համար սահմանվում է	0-0.35	0
	2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	150.0-200.0	150.0
	3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	30.0-60.0	30.0

	4) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է	50.0	50.0
6	Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները՝ ժամը 2400-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ ընթացիկ տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝		
	1/ առևտրի օբյեկտների համար	25.0-50.0	25.0
	2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	50.0-100.0	50.0
	3/ բաղնիքների /սաունաների/ համար	200.0 – 500.0	200.0
	4/ խաղատների կազմակերպման համար	500.0 - 1000.0	500.0
	5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝	250.0 – 500.0	250.0
	6/ վիճակախաղերի կազմակերպման համար	100.0-150.0	100.0
7	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ մետրի տեղական տուրքը սահմանվում է՝		
	1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1.0-2.0	2.0
	2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2.5 –3.5	3.5
	3) Այլ արտաքին գովազդի համար	0.5 - 1.5	1.5
	4) դատարկ գովազդային վահանակների համար	0.7	0.7
8	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	0 – 10.0	3.0
9	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար.		
	1) հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում	1.0 – 6.0	3.0
	2) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում	0-1.0	0
10	համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար՝ ընթացիկ տարվա համար	50.0-100.0	50.0
	Տեղական վճարների տեսակները		
1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,			5.0

ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ ՏԻՄ-ի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		
2) ՏԻՄ-ի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ ՏԻՄ-ի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		5.0
3) ՏԻՄ-ի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար		5.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ գյուղական համայնք, գ. Ջրառատ փ 1-ին, շենք 2, Հեռ. 098 919 526 Էլ. փոստ Jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015թ.N 28-Ա

ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 26-րդ կետերի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ *Ջրառատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

1.Ջրառատ համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2016թվականի համար սահմանել երկու հարյուր տաս հազար ՀՀ դրամ

2. Հաստատել Ջրառատ գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի 2016թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի

3. Ուժը կորցրած ճանաչել Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 17-ի << Ջրառատի գյուղապետարանի աշխատակազմի 2015թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 22-Ա որոշումը

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

ՄԻՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՂԻՇԵ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Հաստատված է
Ջրառատ համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 15-ի թիվ 28-Ա որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Ջրառատի գյուղապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 5

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Գյուղապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական		1	210,0			210,0
2		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	155,0		31,0	186,0
3		Աշխատակազմի գլխավոր մասնագետ - գլխավոր հաշվապահ	Համայնքային ծառայության	2.3-1	1	151,0		30,2	181,2
4		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.2.1	1	100,0			100,0
5		Գյուղապետարանի պահակ	Տեխնիկական սպասարկման		1	75,0			75,0
		Ընդամենը			**5**	**691,0**		**61,2**	**752,2**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ գյուղական համայնք, գ. Ջրառատ փ 1-ին, շենք 2, Հեռ. 098 919 526 Էլ. փոստ Jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015թ.N 29-Ն

ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 54-րդ և 64-րդ հոդվածների, <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով՝ *Ջրառատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել Ջրառատ գյուղական համայնքի 2016թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

1) եկամուտների գծով՝ 11780,7 հազ.դրամ

2) ծախսերի գծով՝ 11780,7 հազ.դրամ

Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները՝ ըստ առանձին եկամտատեսակների հատված 1

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման հատված 2

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հատված 3

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման (հատված 6)

2. Սահմանել

Ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ համայնքի ղեկավարի կողմից կատարվող վերաբաշխումները հոդվածների միջև չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը.

3. Ուժը կորցրած ճանաչել Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 17-ի << Ջրառատ գյուղական համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 23-Ն որոշումը

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ՄԻՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՂԻՇԵ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ գյուղական համայնք, գ. Ջրառատ փ 1-ին, շենք 2, Հեռ. 098 919 526 Էլ. փոստ Jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015թ.N 30

ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով՝ *Ջրառատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

1. Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2016թ. հերթական նիստերի գումարման գրաֆիկ սահմանել՝ համաձայն հավելվածի.

2. Ուժը կորցրած ճանաչել Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 17-ի << Ջրառատ գյուղական համայնքի 2015թվականի հերթական նիստերի ժամանակացույց սահմանելու մասին>> թիվ 24 որոշումը

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ՄԻՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՂԻՇԵ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված

Ջրառատ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 30 որոշման

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2016 թվական

ՀՀ	Համայնքի ավագանու նիստի օրը	Համայնքի ավագանու նիստի օրակարգային հարցեր
1	Հունվարի 15	Համայնքի 2015 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում
2	Մարտի 15	Համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն,
3	Ապրիլի 15	Համայնքի 2016 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին
4	Հունիսի 15	
5	Հուլիսի 15	Համայնքի 2016 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում
6	Օգոստոսի 15	հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկում
7	Հոկտեմբերի 15	Համայնքի 2016 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում
8	Դեկտեմբերի 15	Տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին, համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին, գյուղապետարանիաշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին, Հաջորդ տարվա բյուջեի հաստատում